ԳԼՈՒՍ ԵԼՔ ԹԱԼԳԱՐԱՆ

CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԹԵ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԸ ՔԵԶ ՆԱՄԱԿ ԳՐԵՐ 4

ԹԱՆԳԱՐԱ՞Ն... ԻՍԿ Ի՞ՆՉ Է ԴԱ 6

ՋԵՐԱՐԴ Լ. ԳԱՖԷՍՃԵԱՆԸ ԵՎ «ԳԱՖԷՍՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ..... 8

ԻՆՉՊԵՍ ԴԻՏԵԼ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԸ..... 9

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾ 10

ԿԱՍԿԱԴԻՑ ԱՆԲԱԺԱՆ 12

ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ..... 26

ՇԱՐԺՈՒՄ..... 40

ԳՈՒՅՆ, ՁԵՎ, ՆՅՈՒԹ..... 54

ԱՐՎԵ՞ՍՏ, ԹԵ՞... 82

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄԱՐՄԻՆ..... 90

ՋԵՐԱՐԴ Լ. ԳԱՖԷՍՃԵԱՆԸ ԵՎ «ԳԱՖԷՍՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

Դու հավանաբար գոնե մեկ անգամ մտածել ես, թե ինչու է մեր արվեստի կենտրոնը կրում Գաֆէսճեան ազգանունը:

Ջերարդ Լ. Գաֆէսճեանը (1925-2013) ամերիկահայ մեծ գործարար և բարեգործ էր, որը բնակվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Նա միշտ մտածում էր իր հայրենիքի մասին և ցանկանում էր մի բարի բան անել Հայաստանի համար:

Եվ ահա նա ստեղծում է «Գաֆէսճեան ընտանիք» հիմնադրամը, որի միջոցով իրականացնում է արվեստի մի առանձնահատուկ կենտրոն ունենալու երազանքը, կենտրոն, որտեղ հայերը կկարողանային տեսնել արվեստի այնպիսի հետաքրքրաշարժ, գունագեղ և յուրօրինակ նմուշներ, որոնք կարելի էր հանդիպել աշխարհի ամենազարգացած երկրներում:

Հենց Ջ. Գաֆէսճեանի շնորհիվ է արվեստի կենտրոնն արդեն ավելի քան 10 տարի գեղեցկացնում Երևանի սիրտը: Մեծ բարերարն իրականացրել է արվեստի միջոցով հայաստանցիների կյանքում նոր լույս տարածելու իր նպատակը:

Ջերարդ Գաֆէսճեանի առաքելությունը շարունակում է դուստրը՝ Քեթլին Գաֆէսճեան-Բարադարանը՝ «Գաֆէսճեան ընտանիք» և «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի նախագահը:

Ի դեպ, այս գրքում շատ կհանդիպես ԳԱԿ հապավմանը: Դա նշանակում է

Գ աֆէսճեան

Ա րվեստի

Կ ենտրոն:

Հնագույն ժամանակներում, երբ դեռ չկային մեզ ծանոթ մեխանիկական և էլեկտրոնային ժամացույցները, մարդիկ արևի օգնությամբ էին հետևում ժամանակին՝ արևային ժամացույցների միջոցով: Նման ժամացույցներ մինչ այժմ էլ պահպանվել են վանքերի ու տաճարների պատերին:

Շատրվաններից մի քանիսը հիշեցնում են մեծ **արեգակնային** ժամացույցներ:



Առյուծ արքան ու մոտոցիկլը

Հաստատ կուզես իմանալ, թե ինչ կապ ունեն այս երկուսն իրար հետ:

Քանդակագործներն իրենց քանդակների համար ընտրում են տարբեր նյութեր՝ քար, մետաղ, փայտ և նույնիսկ սառույց: Կորեացի քանդակագործ Ջի Յոնգ-Հոն իր քանդակների համար ընտրել է շատ յուրահատուկ մի նյութ՝ մոտոցիկլի անվադող: Բայց ինչո՞ւ հենց այս տարօրինակ նյութը: Բանն այն է, որ անվադողերի արտադրությունը և հետագայում անպիտան դարձած և աղբանոցներում հայտնված անվադողերի այրումը մեծ վտանգ է բնության համար:

Ջի Յոնգ-Հոն իր քանդակներով երկու կարևոր խնդիր է լուծում՝ և՛ պահպանում է, և՛ գեղեցկացնում շրջակա միջավայրը:

Ջի Յոնգ-Հո (ծնվ. 1978), Հարավային Կորեա
«Առյուծ 2», 2008
Չժանգոտվող պողպատ, ապակի, օգտագործված անվադողեր

Պարտեզի առաջին բնակիչը

Կոլումբացի ամենահայտնի արվեստագետ Ֆերնանդո Բոտերոյի քանդակները կարելի է տեսնել աշխարհի տարբեր քաղաքներում՝ Բարսելոնայում, Մադրիդում, Սինգապուրում, Մայամիում, Նյու-Յորքում, Երուսաղեմում, իսկ 2002 թվականից՝ նաև Երևանում: Բոտերոյի «Կատուն» Գաֆէսճեան քանդակների պարտեզի ամենաառաջին «բնակիչն» է: Հետագայում հեղինակի ևս 2 քանդակ է տեղադրվել պարտեզում:

Դժվար է չսիրել մեր թմբլիկ կատվին իր անմիջականությամբ, դուրս հանած լեզվով, կկոցած աչքերով ու չարաճճի հայացքով:

Կլորավուն, չափազանցված ծավալաձևերով աշխատելու այս ոճը, որն օգտագործում է Ֆերնանդո Բոտերոն, կրում է հեղինակի անունը և կոչվում է «բոտերիզմո»:

Տե՛ս նաև Բոտերոյի մյուս քանդակը, էջ 64:

Ֆերնանդո Բոտերո
(ծնվ. 1932), Կոլումբիա
«Կատու», 1999
Բրոնզ

Մի՞րգ, թե՞ թռչուն

Շատերը կարծում են, որ այս քանդակի հերոսը պինգվին է, բայց ոչ. սա կիվի թռչունն է: Դիտողին երևի շփոթեցնում է նրա պայծառ, բաց կապույտ գույնը: Իրականում կիվին ունի շագանակագույն փամփլիկ մազածածկույթ: Ի դեպ, կիվի միրգն իր անունը ստացել է այս թռչնի հետ արտաքին նմանության շնորհիվ:

Մեր Կիվիին ստեղծել է քանդակագործ Պիտեր Վոյտուկը, որը հաճախ իր մեծ քանդակներում պատկերում է կենդանիների, հատկապես թռչունների:

Կապույտ Կիվին, որն իր երկարավուն կտուցով օդում բռնել է գնդակը, շա՛տ երկար ճանապարհ է կտրելանցել Երևան հասնելու համար: Նա սկզբում Նյու Յորք քաղաքի մետրոյի կայարաններից մեկի մուտքի մոտ էր և ամեն օր ուրախացնում էր աշխատանքի շտապող մարդկանց: Արդեն երկար ժամանակ է, ինչ քանդակը զարդարում է մեր պարտեզն ու հիացնում այցելուներին:

Պիտեր Վոյտուկ (ծնվ. 1958), ԱՄՆ
«Կիվի», 2011
Ալյումին

ՇԱՐԺՈՒՄ

Տիեզերքում ամեն բան շարժման մեջ է: Մեր մոլորակը պտտվում է, ու նրա վրա գոյություն ունեցող ամեն ինչ շարժվում է, այդ թվում՝ մենք:

Երբևէ փորձե՞լ ես շարժում պատկերել:

Բազմաթիվ նկարիչներ ու քանդակագործներ իրենց առջև դրել են շարժում պատկերելու խնդիրը, որն այնքան էլ հեշտ չէ. նրանք ասես փորձում են կանգնեցնել ժամանակը:

Կան նաև քանդակներ, որոնք շարժվում են: Դրանց անվանում են կինետիկ քանդակներ:

Օլիմպիական ձիերը

Օլիմպիական խաղեր, Մեծ Բրիտանիա, ձիու պայտ... Տեսնես ի՞նչ կապ ունեն այս երեքն իրար հետ:

Այս սլացիկ, հսկա ձիերի հեղինակը բրիտանացի ինքնուս քանդակագործ Թոմ Հիլն է: Մոտ 500 ձիու պայտ իրար միացնելով՝ նա ստեղծել է այս քանդակը՝ պատկերելով կենդանիներին թռիչքի պահին: Օլիմպիական ձիերը 2012 թվականին զարդարում էին Լոնդոնում անցկացվող Օլիմպիական խաղերի ձիասպորտի մարզադաշտը, ապա՝ Անգլիայի թագուհու նստավայրը, իսկ այժմ՝ Գաֆէսճեան քանդակների պարտեզը:

Թոմ Հիլ (ծնվ. 1986)
Մեծ Բրիտանիա
«Օլիմպիական ձիեր», 2012
Գալվանացված և ներկված պայտեր, պողպատե պատվանդաններ

Զույգ-զույգ՝ դեպի տապան

Աստվածաշնչում կա մի պատմություն այն մասին, որ Աստված, տեսնելով, որ մարդկանց չարությունը շատացել է երկրի վրա, որոշում է նրանց պատժել: Մի ազնիվ մարդ կար՝ Նոյ անունով, որը միշտ հավատարիմ էր Տիրոջը: Աստված նրան պատվիրում է մի մեծ տապան կառուցել և այնտեղ տեղավորել իր գերդաստանը, ինչպես նաև բոլոր կենդանիներից մեկական զույգ: Եվ երբ Աստված ջրով է ծածկում երկիրը, ողջ են մնում միայն տապանի բնակիչները:

Դորա Դե Լարիոսն իր կավե քանդակում պատկերել է Նոյյան տապանը, դեպի ուր պարուրաձև շարժումով բարձրանում են կենդանիները՝ զույգերով: Նոյն իր մեծ ու բարի աչքերով վերևից հետևում է կենդանիների ընթացքին:



Դորա Դե Լարիոս
(1933-2018), ԱՄՆ
«Նոյյան տապան», մոտ 1962
Ջնարակապատ խեցեղեն

Գունազարդի՛ր լուսինները քո նախընտրած գույներով:



ՆՅՈՒԹ

Արվեստի բոլոր գործերը, որոնք մենք տեսնում ենք ու շոշափում, ստեղծվում են որևէ նյութից: Յուրաքանչյուր արվեստագետ ինքն է որոշում ինչ նյութով աշխատել: Ամեն նյութ ունի իր առանձնահատկությունը: Այն կարող է լինել փափուկ կամ կարծր, հարթ կամ խորդուբորդ, ծանր կամ թեթև, բնական կամ արհեստական:

Արվեստագետն ազատ է ընտրության հարցում, կարող է ընտրել ցանկացած, նույնիսկ՝ ամենաանսպասելի նյութ՝ քար, փայտ, կտավ, թուղթ, ջրաներկ, մետաղ, ապակի, ջուր և այլն: Նյութը նաև շատ կարևոր է հասկանալու համար, թե ինչ տեխնիկա է կիրառել արվեստագետը այս կամ այն աշխատանքը ստեղծելիս. օրինակ՝ նկարի պիտակի վրա կտեսնես գրված «կտավ, յուղաներկ», ինչը նշանակում է, որ հեղինակն այդ նյութերն է օգտագործել իր ստեղծագործության համար:



Թեյասեր փիսիկը

Քեթրին Լաբոնտեն դեռ մանկուց սիրում էր մուլտհերոսներին և հաճախ կրկնօրինակում նրանց: Երբ մեծացավ, սկսեց հորինել իր սեփական զվարճալի հերոսներին, իսկ թուղթն ու մատիտը փոխարինեց ապակիով, չնայած դրանով աշխատելը շատ բարդ է:

Իր ապակե քանդակներում նա հիմնականում պատկերում է կենդանիների, հատկապես սիրում է կատուներին: Նրան նույնիսկ կատուների դիզայներ են անվանում:

Քեթրին Լաբոնտե (ծնվ. 1980), Կանադա
«Մեկ բաժակ թե՞յ», 2012
Ապակի

Մեկ բաժակ թեյ առաջարկող մեր կատուն թեյնիկ է, բայց այնքա՜ն փոքր է ու նուրբ, որ այդ չափի թեյնիկով հազիվ մի փիսիկ կարողանա թեյ խմել:

Դիլլեր Սկոֆիդիո և Ռենֆրո, ԱՄՆ
Սվարովսկի «Լուսագուլպաներ», 2009
Սվարովսկի բյուրեղներ, ցանցանյութ

Գուլպաներ, որ չեն կարող հագնել

Գաֆէսճեան արվեստի կենտրոնում ջահերի մի ամբողջ մեծ ցուցադրություն կա, որի նյութը «Սվարովսկի» ընկերության բյուրեղապակին է: «Լուսագուլպաների» հեղինակները «Դիլլեր Սկոֆիդիո և Ռենֆրո» ամերիկյան դիզայներական ընկերության դիզայներներն են: Գուլպաներ հիշեցնող ցանցերի մեջ տասնյակ բյուրեղներ են, որոնք հատուկ լուսավորման շնորհիվ ավելի են փայլում:

Սվարովսկի բյուրեղապակուց նաև պատրաստում են զարդեր, քանդակներ, հագուստ և այլ կենցաղային լրամասեր:

Գունավորի՛ր «Գաֆէսճեան բյուրեղապակյա աշտարակը»
քո նախընտրած գույներով:



Մադագասկարցի ալիգատորները

Այս երեք ալիգատորները քարացած փայտից փորագրել է մադագասկարցի անհայտ մի փայտագործ:

Քարացած փայտը հաճախ անվանում են բնության քանդակ: Երբ փայտը թաղվում է հողի տակ և զրկվում թթվածնից, հանքանյութերով հարուստ ջուրը նրա բջիջներում առաջացնում է հանքաքարեր, հիմնականում՝ կվարց: Ժամանակի ընթացքում օրգանական հանքանյութերը ոչնչանում են, և նախկին փայտը վերածվում է փայտի տեսքով քարի:

Քարացած փայտ ստանալու համար պահանջվում է մոտ 100 տարի: Աշխարհի շատ վայրերում կան քարացած փայտի անտառներ: Այս քանդակի փայտը ձեռք է բերվել Մադագասկարից:

Անանուն, Մադագասկար
«Ալիգատորներ», 20-րդ դար
Քարացած փայտ

Ծիծաղով պաշտպանվողը

Աշխարհահռչակ արվեստագետ Յուե Մինջունը հաճախ իր քանդակների ու նկարների հերոսներին պատկերում է ծիծաղելիս: Միշտ չէ, որ այդ կերպարները ուրախությունից են ծիծաղում. երբեմն դա պաշտպանական ծիծաղ է: Ամբողջ ատամնաշարն ի ցույց դնող կերպարները, որոնց հաճախ կարելի է տեսնել Մինջունի աշխատանքներում, հենց արվեստագետի ինքնապատկերներն են:

Մինջունի այս քանդակը վերնագիր չունի: Իսկ դու ի՞նչ վերնագիր կդնեիր:

Յուե Մինջուն (ծնվ. 1962), Չինաստան
«Անվերնագիր», 20-րդ դար
Չժանգոտվող պողպատ